Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

13

ՔԱՐԱՅՐԸ

Մոկունք գյուղի կիսամութի մեջ լռությամբ ծխող խորհրդավոր մարդը, որ ներկա էր իմ ուխտին, հայտնի էր Քարայր անունով: Նա Տարոն աշխարհի սուլթանի բռնակալության դեմ մարտնչող հայդուկային խմբերի առաջնորդն էր: Նա էր մտցրել սրի և խաչի վրա երդվելու արարողությունը: Նա էր պահանջել Անդրանիկից և Գևորգ Չաուշից գտնելու Արաբոյի տան նշանավոր ավետարանը, որպես հզոր նախապայման հայդուկի երդման համար:

Քարայրը հայդուկից պահանջում էր լինել գաղտնապահ և անձնազոհ: Հայ ֆիդային իր բարոյական նկարագրով բարձրագույն կետն էր մարդկային առաքինության, քարոզում էր նա: Ոչ փառք, ոչ հանգիստ, ոչ հաշիվ: Հայդուկության մեջ մտնողը պետք է իր ետևում թողնի անձնասիրությունը և քանի դեպի ներս առաջանա, այնքան պիտի մերկանա իր եսից ու անձնականությունից: Հայ ֆիդային ունի միայն մի իդեալ. տառապելով ծառայել հայոց ազատությանը: Նա պետք է մեռնի գնդակով, կախաղանի վրա կամ բանտի մեջ, եթե հավատարիմ է իր ուխտին: Ինչին է պետք եսական սերը, երբ կա մի ավելի մեծ սեր հայրենիքի սերը: Ֆիդայու անձնական սերը լոկ արգելք է ազատորեն գործելու և հանգիստ մեռնելու ճանապարհին: Քարայրն ասում էր, որ տոկալն ու համբերելը ֆիդայու համար նույնքան անհրաժեշտ է, որքան պատերազմի դաշտում զենքը ձեռքին կռվելը: Որովհետև, եթե մեկը ֆիդայի դառնալով

մոռանում է սեփական անձը, նրա համար այլևս ի նչ արժեք ունի տառապանքն ու նեղությունը: Քարայրը խիստ էր ինչպես իր սեփական անձի, այնպես էլ ուրիշների հանդեպ: Հայդուկային ժուժկալությունը և պարկեշտությունը գերագույն սրբություն էին նրա համար. կարգապահության խախտումը՝ մեծագույն հանցագործություն: Նա քարոզում էր, որ պետք է արթնացնել հայ գյուղացուն, հասկացնել նրան, որ ինքը ճորտ է, ամրացնել նրա հավատը ապագայի հույսերով և Սասունի ու Տարոնի բովանդակ հայությանը հոգեբանորեն վերափոխելով դարձնել հայդուկ: Քարայրը դեմ էր ցուցական կռիվներին, այս կամ այն վայրի վրա հանկարծական հարձակումներ գործելուն և կողմ էր միասնական, համաձավալ ժողովրդական գրոհին:

Հայություն չեն կազմում նրանք, ասում էր Քարայրը, որոնք շարունակ տերտեր են կոչում, այլ նրանք, որ հավատք ունեն: Մեզ մոտ է հավատավոր մարդկանց մի ուժեղ սերունդ, որի կոչումն է ծառայել Հայաստանի ազատագրության արդար դատին և ոչ թե այս կամ այն խմբակցության եսական շահերին:

Այսպես էր Քարայրը:

Այս մոլեռանդ քարոզիչը գյուղական շորեր հագած դերվիշի նման թափառում էր գյուղից-գյող, ատելություն սերմանելով դեպի այն ամենը, ինչ վատ էր ու կործանարար, և անձնվեր սեր արծարծելով դեպի այն ամենը, ինչ վեհ էր ու օգտակար հայրենիքի և ընդհանրականի համար:

Քարայրն ուներ կողմնակիցներ, որոնք իր նման տանջվել էին սուլթանի բանտերում: Նրանցից մեկը մշեցի Կոտո Հակոբն էր, որ նստել էր Սինոպի և Ակրայի բերդերում, իսկ մյուսը՝ Կառնենա Մկրտիչն էր: Քարայրի և Կառնենա Մկրտիչի թելադրությամբ էր, որ սասունցիները իրենց և Անդրանիկի միջև ծագած վեճը լուծել էին Անդրանիկին զինաթափ անելով:

Քարայրը ֆիդայիների հետ չէր շրջում, այլ միշտ միայնակ, գյուղական աղքատիկ հագուստով և անզեն, իբրև մի խեղճ շինական: Սովորաբար շրջում էր մութին: Մի տիկ շալակին և ցուպը ձեռքին, նա գիշերային խավարի միջով անցնում էր գավառից-գավառ, ավանից-ավան, ամենուրեք քարոզելով և կազմակերպելով հայ ժողովրդին զանգվածային մեծ ապստամբության համար:

Սուլթանի բռնակալությունը նա համարում էր աշխարհի մեծագույն չարիքներից մեկը: Սակայն նա իր դառը փորձով եկել էր այն համոզման, որ եվրոպական պետությունների դռներ բախելը և նրանցից օգնություն հայցելը միամիտ հավատ է, մանավանդ «երկաթե շերեփի» հայտնի իրողությունից և Մոսե Իմոյի դեպի Անգլիա կատարած ուղևորությունից հետո: Սուլթանի դեմ կռվող հայդուկները, ասում էր Քարայրը, իրենց հույսը պետք է դնեն իրենց և իրենց ժողովրդի սեփական ուժերի վրա, կապվելով Ռոմանովների կայսրությունը սասանող և օրեցօր հզորացող ռուսական հեղափոխական առողջ ուժերի հետ:

Միամտաբար հավատում էինք, թե Անգլիան և ասպետ Ֆրանսիան մեզ պիտի օգնեն, բայց երկուսն էլ մեզ խաբեցին, երկուսի երեսն էլ սև է: Հայ ժողովուրդ, ես քեզ ասում եմ՝ անգութ է Եվրոպան, քարոզում էր Քարայրը: Չհավատաս նրան երբեք:

Տարոնի ժողովուրդը սիրում էր համեստ արտաքինով այդ խորհրդավոր մարդուն, որ կարծես մեր անցյալի մշուշներից ելած մի ուրվական լիներ:

Երբևիցե կռացած նայե՞լ եք մութ քարայրից ներս: Կարողացե՞լ եք անմիջապես կռահել, թե նա ինչպիսի խորհրդավոր անցքեր ու ոլորաններ ունի: Այդպես էր շեկ մազ ու մորուսով, նիհար, ոսկրոտ այդ մարդը: Նրա զինական անունը Հրայր էր, ոմանք նրան Դժոխք էին ասում, բայց ժողովուրդը նրան կնքել էր Քարայր: Եվ այդ անունը որքա՜ն հարմար էր նրան:

Իսկապես քարայր էր նա, խորհրդավոր ու մութ: Հազիվ ծագած՝ իսկույն անհետանում էր: Ցերեկները նրա տեղը հայ շինականի գոմի կամ մարագի մի մութ անկյունն էր տրեխը հագին, արախչին գլխին, իր շուրջը ժողոված մարդկանց հրեղեն խոսքերով քարոզ կարդալիս, իսկ գիշերները ճամփորդում էր դերվիշի կերպարանքով՝ գավազանը ձեռքին և տիկը շալակին:

Շատ մեծ եղավ իմ զարմանքը, երբ իմացա, որ ինձ ծեծող ոսկրոտ դիմագծերով և փոքրիկ մորուսով այդ մարդը այն միևնույն շինական Արմենակն էր, որից ես մի տուփ ծխախոտ էի վերցրել դրանից մի քանի տարի առաջ Կարմիր Ծառ գնալիս: Նրա փույթը չէր բնավ, որ ես բանտ էի նստել կամ կյանքս վտանգի տալով Անդրանիկի ձին փախցրել էի վանքի շրջապատումից:

Իմ անզգույշ շարժումով ես արձագանքել էի անծանոթ կնոջ կանչին, երբ նոր էի երդվել սրի, ավետարանի և խաչի վրա, որի համար էլ նա ինձ ենթարկել էր անողորմ պատժի:

Եվ նա ինձ պատժել էր այն միևնույն գավազանով, որ իմ ներկայությամբ պոկել էր իրենց անտառի կարմրածառից, որի ամուր փայտից մեր նախնիները հին ժամանակներում նետեր էին շինել ինքնապաշտպանության համար:

ԳԵՎՈՐԳՆ ՈՒ ՈՍԿԻՆԵՐԸ

Երդում տալը և խստությունների ենթարկվելը քիչ էր: Հայդուկ դառնալու համար ես պարտավոր էի զենք ունենալ: Հիշում էի, մանավանդ, Աղբյուր Սերոբի մի խոսքը հայ գյուղացիներին. «Սուլթանի երկրում առանց հացի մնացեք, առանց զենքի մի մնացեք»:

Բայց ինչպե՞ս զենք ճարել:

Մի հրացան ձեռք բերելու համար Գևորգ Չաուշը մինչև Հալեպ էր գնացել: Իսկ ես ու՞ր գնայի և ի՞նչ միջոցով:

Մտածում էի գնալ Մուշ և իմ Հովհաննես պապից կամ քեռի Բդեից փող վերցնել և մի հրացան առնել ինձ համար:

Այդ մտքերի մեջ էի, երբ Գևորգ Չաուշը սաստեց ինձ՝ ասելով.

Քո Մուշ գնալու ժամանակը դեռ չի հասել: Եվ ինձ իր հետ առնելով, մի խավար գիշեր ելավ Սուլուխից:

Այդ սասունցին Դաշտի ամեն ծակ ու ծուկին ծանոթ էր: Ճանապարհները գիտեր աչքը փակած:

Իր հորեղբոր սպանությունը, ռես Ավեի և Խալիլ աղայի ահաբեկումը և, մանավանդ, Առաքելոց վանքի կռիվը այնպես էին հռչակել նրան, որ Սուլթանի անիրավ պաշտոնյաները նրա անունը լսելիս գողում էին:

Սիմ լեռան հյուսիսային լանջին Փեթար անունով մի փոքրիկ գյուղ կար, որ նայում էր դեպի Մշո դաշտ: Մուշ քաղաքից Յուսուֆ կոչվող մի բեկ, շինծու մի թուղթ ձեռքին, հայտարարել էր, թե այդ գյուղը եղել է իր պապական կալվածքը: Նա Մուշից գնացել էր Փեթար և այնտեղ երկհարկանի մի քյոծկ շինելով, հայ գյուղացիներից տասնյակ տարիների աղայական տուրք էր պահանջել: Գևորգ Չաուշը Յուսուֆ աղային զգուշացրել էր՝ նեղություն չտալ հողի աշխատավորներին: Յուսուֆը հետևյալ առավոտ ձերբակալել էր բողոքող գյուղացիներից մի քանիսին և ոստիկանների ու զորքի օգնությամբ Փեթար մտնելով, կոզոպտել էր ամբողջ գյուղը և մի քանի հարյուր հավելյալ տուրք գանձելոց՝ վերադարձել էր Մուշ:

Գևորգ Չաուշը իր մի քանի հայդուկներով մտել էր Յուսուֆ բեկի ապարանքը և հարստահարիչին խողխողելով, նրա հափշտակած ոսկիները վերադարձրել էր Փեթարի հողագործներին, նախապես մի թուղթ դնելով սպանվածի ծոցը. «Ես քեզ մեռցրի զուլումիդ համար»:

Գևորգը մեծ աշխատանք էր տանում վերականգնելու Հայ և քուրդ բարեկամությունը, որ խախտվել էր Սուլթան Համիդի տարիներին: Այդ բանը նա անում էր, երբեմն, ահաբեկման միջոցով: Իր սարսափի հետ միաժամանակ այնպիսի հմայք էր ստեղծել իր շուրջը, որ նույնիսկ շեյխերը նրա անունով երդվում էին:

Գևորգը հաճախ միայնակ էր շրջում: Այնքան գնացել-եկել էր բեկերի քյոշկերի մոտով, որ նրանց շները այլևս դադարել էին նրա վրա հաչելուց: Պատահում էր, որ հայ գյուղերին մոտենալիս զանգակները խփում էին և մարդիկ իրար աչքալույս էին տալիս, թե՝ «Գևորգ Չաուշը եկավ»:

Երբեմն, ուշ գիշերով, նա անսպասելիորեն մտնում էր քրդական որևէ բնակավայր և նրա մեծավորի դուռը ծեծելով, ասում. «Ի՞նչ եք մեռածի պես քնել, աղա: Գևորգ Չաուշին այս մութ գիշերին հերիք չէ՞ սպասեցնեք քյոշկի առաջ: Դուռը շուտ բացե՛ք՝ ղոնաղ եմ եկել»: Եվ ահաբեկված աշիրեթապետը կամ աղան դուռը բանալով, խոնարհաբար դիմավորում էին ահարկու Գևորգին, համբուրելով նրա ձիու ասպանդակը:

Գևորգը երկար չէր մնում այդտեղ: Հասկացնում էր, որ ինքը պարզապես այդ գյուղի մոտով անցնելիս ուզեցել է մի կարճ պահով հանդիպել իր ծանոթ քիրվոյին, նրա քեֆը հարցնել և շարունակել ճամփան:

Բայց այս գիշերային այցը մի քիչ տարբեր էր: Ֆաթիմ անունով մի դաժան հարկահավաք տուրքեր գանձելիս անասելի նեղություն էր պատճառում հայ և ասորի գյուղացիներին:

Գևորգը ինձ ոլորապտույտ ճանապարհներով տարավ և կեսգիշերին կանգնեցրեց այդ հարկահավաքի քյոշկի առաջ: Դուռը զարկեց.

Ֆաթի՛մ էֆենդի՛, Ֆաթի՛մ էֆենդի՛:

Ոչ մի ձայն:

Ֆաթիմը մի հայ ծառա ուներ, անունը Համտի:

Համտին դռան ետևից հարցրեց.

Ո՞վ եք:

Ես ցածր ձայնով հուշեցի.

Եկողը Գևորգ Չաուշն է, դուռը բաց:

Գևորգը հարցրեց.

Ֆաթիմ էֆենդին տա՞նն է, իրեն տեսնել կուզեմ:

Տանն է, բայց քնած է, ծանուցեց Համտին դռան արանքից:

Գնա՛ իրեն քնից հանիր և ասա, որ շեմքին կանգնածը Գևորգ Չաուշն է: Մուշից է եկած և հատկապես կուզի իրեն տեսնել:

Համտին գնաց եկավ՝ թե աղան խոր քնած է:

Քեզ ասում եմ՝ գնա աղայիդ արթնացրու և հայտնիր իրեն, թե եկողը Գևորգ Չաուշն է:

Համտին նորից գնաց և մենք լսեցինք, թե ինչպես նա բավական անվախորեն արթնացնում էր իր աղային.

Ֆաթի՛մ էֆենդի:

Արձագանք չկար:

Ֆաթի՛մ էֆենդի, նորից հնչեց Համտին:

Ի՞նչ կա:

Գևորգ Չաուշն է եկել և հատկապես կուզի քեզի տեսներ

Գևորգ Չաու՞շը: Ու մենք զգացինք, թե ինչպես աղայի ձայնը դողաց:

Փեթար աղային սպանո ղ Գևորգ Չաուշը, կմկմաց Ֆաթիմ էֆենդին ու լեզուն փաթ ընկավ:

Ուրիշ չաուշ չկա, պատասխանեց ծառան:

Հիմա որտե՞ղ է:

Կանգնած է շեմքին:

Հարցրու, թե ինչ կուզի:

Համտին վերադարձավ.

Ֆաթիմ էֆենդին կհարցնի, թե Գևորգ Չաուշը ի՞նչ կուզի:

Գնա իրեն ասա, որ Գևորգ Չաուշը կուզի չորս հարյուր ոսկի:

Համտին ետ գնաց.

Գևորգ Չաուշը կուզի չորս հարյուր ոսկի, ասաց նա: Ապա իր կողմից ավելացրեց, որպես տուգանք ժողովրդի տուրքերը հավաքելիս նրանց պատճառած չարչարանքների և առած կաշառքի դիմաց:

Ինչու՞ այդքան շատ կուզի:

Չգիտեմ, աղա, իր ուզածը չորս հարյուր ոսկի է:

Աղեկ: Ես իր ուզած ոսկին կտամ, բայց իրենից խոսք առ, որ այդ գաղտնիքը մեր մեջ կմնա:

Ես ճեղքից տեսա, թե ինչպես Ֆաթիմ էֆենդին շապկանց ելավ անկողնից, խալաթը վրան առավ, ճրագը ձեռքին մտավ ինչ-որ տեղ և քիչ անց մի տոպրակ բերելով, դողդողալով հանձնեց ծառային:

Ուղիղ չորս հարյուր հատ է: Իմ ասածը չմոռանաս:

Գևորգ էֆենդի, տոպրակով ոսկին մեզ տալով ասաց ծառան, Ֆաթիմ էֆենդին խնդրեց, որ Գևորգ Չաուշը իր խոստումը կատարի՝ առանց գաղտնիքը մեջտեղ հանելու:

Հարկավ կկատարեմ, ասաց սասունցին և Համտիին գիշեր բարի մաղթելով, հարկահավաքի դուռը ծածկեց:

Ես ոսկին շալակեցի ու գնացինք:

Գևորգ Չաուշը գիտեր, թե սուլթանի այդ անխիղճ պաշտոնյան ո՛ր թշվառ գյուղացիներից էր կորզել այդ գանձը:

Քեռի Հուլիանոս, քնա՞ծ ես: Էս քսան ոսկին առ ու վաղը գնա լծկան գնիր քեզ համար: Ասորի Սահակ, տեսնում եմ երեխաներդ քաղցից շուռումուռ են գալիս վերմակի տակ: Էս տասնհինգ ոսկին առ ու մի քիչ հաց ու թացան առ մանուկներիդ: Խնամ Մարտիրոս, վերցրու էս տաս ոսկին ու մարագիդ՛ գերանները նորոգիր:

Այսպես գյուղից-գյուղ անցնելով և շինականների տանիքները բարձրանալով, Գևորգ Չաուշը ամեն մեկի երդիկից ցած էր գլորում մի բուռ ոսկի:

Մոտեցանք վերջին գյուղին:

Այստեղ մենավոր մի տուն կար: Չաուշն ինձ տարավ կանգնեցրեց այդ տան պատի տակ: Մազե պարանին, որի մի ծայրը կապված էր բարդի ծառից, սպիտակին էր տալիս մի անդրավարտիք, կողքին մի զույգ գուլպա: Տան տերը մի տարի առաջ լքել էր տունը և գնացել: Կինը ամեն շաբաթ լվանում էր բացակա ամուսնու շորերը և լվացքը փռում պարանին, որ անցնող-դարձողը իմանար, թե տանը տղամարդ կա: Երբեմն էլ, պատի տակ կամ տանիքին նստած, մի շապիկ կամ անդրավարտիք ծնկանը դրած, կոճակ էր կարում կամ օղակ լցնում՝ դարձյալ այդ նպատակով:

Երբ հարցնում էին.

Սալվի, ու՞ր է Մկրոն:

Քաղից նոր եկավ՝ քրտնած պառկած է, պատասխանում էր Սալվին, շարունակելով իր կարը: Մի ուրիշ անգամ ասում էր. «Մկրոն սար է գնացել», կամ թե՝ «ջուր եմ դրել, որ Մկրոն լողանա»: Եվ այսպես, տղամարդու մի շապիկ կամ շալվար դրսում կախելով, կամ կոճակներ շարելով ու օղակներ լցնելով, Սալվին շաբաթներով, ամիսներով ամոթխածությամբ թաքցնում էր ամուսնու բացակայությունը, հույս ունենալով, որ մի օր Մկրոն տուն կգա, մինչդեռ ամուսինը անվերադարձ հեռացել էր տնից, իրեն մենակ ձգելով: Պատկից հարևանները գլխի էին ընկել, որ ամուսինը տանը լի, բայց չէին ուզում Սալվիին զրկել իր երջանիկ խաբկանքից: Նրանցից մեկ-երկուսը նկատել էին, թե ինչպես ուշ գիշերին, երբ գյուղը քնած էր, Սալվին ճրագի տակ նստած հեկեկում էր մենակությունից: Երբեմն շեմքը դուրս գալով, երկար նայում էր պարանից կախված անդրավարտիքին և բրդյա հաստ գուլպաներին, մոտենալով ուղղում էր լվացքը և դանդաղ մտնում էր ներս, լուսնի շողերի տակ չորացնելով իր կարոտի արցունքները:

Մենք էլ տեսանք կիսամթնում պարանի վրա օրորվող այդ «սուտ լվացքը»: Գևորգը անաղմուկ մոտեցավ և տասնհինգ ոսկի փաթաթեց անդրավարտիքի փողնոցի մեջ, դաշտեցի այդ լքված մենավոր կնոջ համար:

Լուսադեմին մեզ մոտ մնաց ընդամենը տաս ոսկի:

Էս տաս ոսկին էլ քեզ, դու էլ ինձ հետ ամբողջ գիշերը չարչարվեցիր: Գնա քեզ համար զենք առ, ասաց Գևորգը, վերջին ոսկիները իմ բուռը դնելով:

Երկու օր հետո ես մի հրացան ձեռքիս ներկայացա Գևորգ Չաուշին: